ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր գյուղ համայնք 10-րդ փողոց 11 վարչական շենք
Հեռ. (0222) 3-49-93, Էլ. փոստ norgyux @ mail.ru

0-77
23.06.2017թ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզպետ
պարոն Կ.Գուլոյանին

Ձեզ է ներկայացվում համայնքի ղեկավարի որոշումները:

Արդիր PDF ֆայլեր:

Նոր գյուղի համայնքապետ Գ. Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
համայնք, հասցե, գՆոր գյուղ հեռախոս, 0222 6 25 35
էլ.փոստ E-mail norgyux @ mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունիսի 2017թ N 78

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 12 ապրիլի 2001 թվականի թիվ 286 –Ն որոշմամբ հաստատված կարգի 27 կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Նոր գյուղի համայնքի ավագանու 2016թ դեկտեմբերի 22-ի թիվ 40 որոշումը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

Կոտայքի մարզի Նոր գյուղ համայնքի վարչական տարածքում գտնվող /կոդ 07-049-0228-0061 կադաստրային ծածկագրով 0.112852հա մակերեսով բնակելի կառուցապատման նշանակության հողամասը ուղղակի վաճառքով, սեփականության իրավունքով օտարել Աննա Հովհաննիսյանին:
Հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել 701000դրամ:

Նոր գյուղի համայնքապետ՝ Գ .Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր գյուղ համայնք, հասցե, գ Նոր գյուղ հեռախոս,
0222 3 49 93 էլ.փոստ E-mail nor.gyux@ mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

15 հունիսի 2017թ N 79

## ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոր գյուղի վարչական տարածքի /ծածկագիր 07-049-0035- բնակավայրի արդյունաբերական հողամասին տրամադրել հասցե. Նոր գյուղի 1-ին փողոց թիվ 1/1 հասցեն:

Նոր գյուղի համայնքապետ՝ Գ.Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր գյուղ համայնք, հասցե, գ Նոր գյուղ հեռախոս, 0222 3 49 93
էլ.փոստ E-mail azizyansh @ mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

15 հունիսի 2017թ N 80

## ՇԱՎԱՐՇ ԱՍԼԱՆՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՍՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ և ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը

Ո Ր Ո Շ Ու Մ ԵՄ

1.Թույլատրել Շավարշ Ասլանյան անհատ ձեռնարկատերին/ վկայական 01Ա 116982/ Նոր գյուղի 10-րդ փողոց N 1/1 հասցեում գտնվող հիմնական շինության ներսում կազմակերպելու ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառք:

2.Թույլտվություն տալու հետ միաժամանակ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան գանձել տեղական տուրք 18 / տասնևութ/ հազ. դրամ գումարի չափով:

3 Թույլտվությունը տրվում է 2017թվականի հունվարի 1-ից 2017թվականի հուլիսի 01-ը ընկած ժամանակաշրջանի համար:

4 Որոշումը ուժի մեջ է մինչև 2017 թվականի հունվարի 1-ը:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Նոր գյուղի համայնքապետ Գ Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր գյուղ համայնք, հասցե, գ Նոր գյուղ հեռախոս,
0222 3 49 93 էլ.փոստ E-mail nor.gyux@ mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2017թ N 81

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, **որոշում եմ.**

1. Քաղաքացի Քրիստ Սարգսյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Նոր գյուղի 07-049-0038-0012 կադաստրային համարի հողակտորում պարիսպ կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:
2. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Սամվել Հարությունյանի վրա:

Նոր գյուղի համայնքապետ՝ Գ.Ծաղկոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր գյուղ համայնք, հասցե, գ Նոր գյուղ հեռախոս,
0222 3 49 93 էլ.փոստ E-mail norguyx@ mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 82

19 հունիսի 2017թ

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Էդուարդ Կարենի Գոմկցյանի դիմումը՝ Նոր գյուղի 3 թաղամաս Հիվանդանոցային փակուղի 1 արտադրամաս **հասցեում գտնվող** համայնքային սեփականություն հանդիսացող արտադրամաս և անավարտ շինությունները **իրեն օտարելու մասին**: Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ և 35.1-րդ կետերով

**որոշում եմ.**

1. Համայնքային սեփականություն հանդիսացող **Նոր գյուղի 3 թաղամաս Հիվանդանոցային փակուղի 1 արտադրամաս հասցեում գտնվող** արդյունաբ. ընդերքօգտ. և այլ արտ. նշանակության **/ծածկագիր 07-049-0275-0022/ 1300.0քառ.մետր մակերեսով հողակտորը և հողակտորում ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված շինություներ՝ 367.53 քառ.մետր մակերեսով արտադրամաս, 112.48քառ.մետր մակերեսով անավարտ շինություն և 56.72քմ.մետր մակերեսով անավարտ շինություն օտարել** կառույցները իրականացրած Էդուարդ Կարենի Գոմկցյանին:
2. Պարտավորեցնել Էդուարդ Կարենի Գոմկցյանին ՝:10-օրյա ժամկետում մուծելու հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 1614600( մեկ միլիոն վեց հարյուր տասնչորս հազար վեց հարյուր ), շինություններ՝ արտադրամաս արտաքին մակ. 408.53 քմ, վաճառքի արժեքը՝ 1062180(մեկ միլիոն վաթսուներկու հազար մեկ հարյուր ութսուն), անավ.շինություն /արտաքին մակ. 118.8 քմ. վաճառքի արժեքը՝ 308800( երեք հարյուր ութ հազար ութ հարյուր), անավ.շինություն արտաքին մակ. 72.92 քմ. և վաճառքի արժեքը՝ 207800(երկու հարյուր յոթ հազար ութ հարյուր), Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Լիազորել աշխատակազմի առաջատար մասնագետ ՝ Սամվել Հարությունյանի ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 2-րդ կետում նշված գումարների վճարումից հետո 10-օրյա ժամկետում գնորդի հետ կնքելու անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:
4. Ընդունել ի գիտություն, որ գույքի օտարման պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները պետական գրանցման՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում:
5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետի վրա Սամվել Հարությունյանի:
6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Նունե Մկրտչյանի:

Նոր գյուղ համայնքի ղեկավար Գ.Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր գյուղ համայնք, հասցե, գ Նոր գյուղ հեռախոս,
0222 3 49 93 էլ.փոստ E-mail azizyansh @ mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 83

19 հունիսի 2017թ.

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002թվականի փետրվարի 2-ի թիվ 91 և 2002թվականի մայիսի 11-ի թիվ 498 որոշման 2-րդ մասի «բ» ենթակետի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. Թույլատրել Քրիստ Սարգսյանին Նոր գյուղ համայնքի վարչական տարածքի /07-049-0038-0012/ բնակելի կառուցապատման հողամասում 0.08հա կառուցելու պարիսպ

2. Պարտավորեցնել`

1 Շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օրվա ընթացքում տեղեկացնել համայնքի ղեկավարին և քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությանը:

2 Մուծել սահմանված չափի տեղական տուրք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքապետ` Գ.Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր գյուղ համայնք, հասցե, գ նոր գյուղ հեռախոս,
0222 3 49 93 էլ.փոստ E-mail norguyx@ mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 84

23 հունիսի 2017թ

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ , ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Խաչատուր Վարդգեսի Բարխուդարյան (ծնված՝ 1959 թվականի հունվարի 03-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Նոր գյուղ համայնքի 1-ին փողոցի թիվ 10/2 հասցեի բնակավայրերի նպ.կառ. հողամասում (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական N 18092012-07-0351, տրված անշարժ գույքի կադաստրի կողմից 2012 թվականի սեպտեմբերի 18-ին, ,ԳՈՒՅՔԱՉԱՓ ՍՊԸ-ի կողմից 2017 թվականի ապրիլի 21-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) ինքնակամ կառուցված շինությունները:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ ընդհանուր դրույթների 3-րդ կետի և որոշման հավելվածով հաստատված կարգի 10, 11 և 18-րդ կետերի բ) ենթա կետի հողային օրենքի 64-րդ հոդվածի 10-րդ կետի պահանջներով և հաշվի առնելով այն, Խաչատուր Վարդգեսի Բարխուդարյան Նոր գյուղ համայնքի 1-ին փողոցի թիվ 10/2 հասցեի որ բնակավայրերի նպ.կառ. հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Համաձայն ԳՈՒՅՔԱՉԱՓ ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի հասարակական կառուցապատման հողամասից 0.04հա հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակելի կառուցապատման:
2. Նոր գյուղ համայնքի 1-ին փողոցի թիվ 10/2 հասցեում գտնվող Խաչատուր Վարդգեսի Բարխուդարյանի սեփական իրավունքով պատկանող 0.04հա հողամասի վրա 2012թ. ինքնակամ կառուցված 100.4քմ. արտաքին մակերեսով բնակելի տունը և 40.72քմ. արտաքին մակերեսով ծածկարանը ճանաչել օրինական:
3. Կառուցապատում իրականացրած անձին՝ Խաչատուր Վարդգեսի Բարխուդարյանի կողմից 30-օրյա ժամկետում օրինականացման ընդհանուր գումար՝ 162300ՀՀ դրամ և 0.04հա հողամասի կադաստրային արժեքը 496800ՀՀ դրամ չվճարելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

Նոր գյուղի համայնքապետ՝ Գ.Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր գյուղ համայնք, հասցե, գ Նոր գյուղ հեռախոս,
0222 3 49 93 էլ.փոստ E-mail nor.gyux@ mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2017թ N 85

## ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի պահանջներով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոր գյուղի վարչական տարածքի /ծածկագիր 07-049-0282- բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել հասցե. Նոր գյուղի 1-ին փողոց թիվ 10/3 հասցեն:

Նոր գյուղի համայնքապետ Գ.Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր գյուղ համայնք, հասցե, գ Նոր գյուղ հեռախոս,
0222 3 49 93 էլ.փոստ E-mail nor.gyux@ mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2017թ N 86

## ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 30-րդ կետի պահանջներով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոր գյուղի վարչական տարածքի /ծածկագիր 07-049-0282- 0034 բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի հասցեն թողնել անփոփոխ . Նոր գյուղի 1-ին փողոց թիվ 10/2 հասցեն:

Նոր գյուղի համայնքապետ՝ Գ.Թաղևոսյան